## ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՍՐԲԱՏԱՌ ԿՈՆԴԱԿԸ «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄ»-Ի ՔՍԱՆՀԻՆԳԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

### ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՕՆԱՍԷՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻ ԱՆԴԱՄՆԵՐՈՒՆ ՀԱՐԱԶԱՏ ԴՍՏԵՐԱՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՈՂՋՈՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՊԷՅՐՈՒԹ

Ամենաբարին Աստուած մեր Եկեղեցին բախտաւորեց, Պէյրութի մէջ հիմնադրումովը Սուրբ Էջմիածնի Կրօնասէր Տիկնանց բարեխնամ Համախմբումին 1959 թուականին, որու գործունէութեան քսանհինգամեակը կը պատրաստուիք տօնել եկող տարի՝ 1984-ին, յատուկ հանդիսաւորութեամբ:

Երկար դարեր շարունակ, հաւատաւոր հայ կինը միշտ նեցուկ և պաշտպան կանգնած է մեր Մայր Եկեղեցիին իր բարոյական եւ նիւթական անշահախնդիր աջակցութիւնը բերելով առանց սակարկութեան: Դուք, արժանի ժառանգորդները մեր նախնեաց կրօնասէր առաքինազարդ կանանց վերջին քսանհինգ տարիներու ընթացքին, երբեմն դժուարին պայմաններու մէջ, միշտ մնացած էք հաստատ ձեր հաւատքի վէմին վրայ և աշխատած էք պայծառացնել Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցիին գլուխն ու կեդրոնը հանդիսացող աստուածաշէն Սուրբ Էջմիածնի Մայր տաճարը, ձեր հոգատար վերաբերումով, ձեր սիրով և ձեր զոհաբերումներով:

Համախմբումիդ հիմնադրության 25-ամեակին առթիւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն կը յղենք հայրապետական Մեր օրհնութիւնը վարչութեանդ և Համախմբումիդ բոլոր անդամներուն, ազնուասիրտ նուիրատուներուն և բոլոր ձեր համակիրներուն, մաղթելով ամենքիդ ձեր եկեղեցաշէն գործոց լիակատար յաջողութիւն, ընտանեկան երջանկութիւն՝ երկար ու արևոտ տարիներով ու խաղաղութեամբ:

«Ողջ լերուք զօրացեալ Սուրբ Հոգւով և յաւէտ օրհնեալ ի Տեառնէ և ի Մէնջ». ամէն:

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 9 Դեկտեմբերի
1983 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԼԲ
ի մայրավանս Սրբոյ Էջմիածնի:
Հմր. 1230